ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/227

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8629-2022 գրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 03.05.2022թ. թիվ 004-2022 գրության հիման վրա, 12.05.2022թ. թիվ 26/26-1/8629-2022 գրությամբ նախաձեռնել է «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.06.2022թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից պայմանագրի կնքման մասին ոչ մի ծանուցում չենք ստացել: Անգամ գործում առկա չի որևիցե փաստաթուղթ, որը կվկայեր, որ մենք ստացել ենք ու ծանուցվել ենք պայմանագրի կնքման մասին:

2. էլ չասենք, որ մեր ընկերությունը թիվ «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին զբաղեցրել է 3-րդ տեղը: Անհասկանալի է, թե ինչի մեզ պետք է ուղարկվեր պայմանագիր կնքելու մասին ծանուցում»:

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/227 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.05.2022թ. թիվ ԵԿ-004-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար ձիու մսի ձեքբերման նպատակով իրականացված ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05 գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող գնահատող Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 23-ի N5 որոշմամբ, որպես Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակում, անգործության ժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ «Նոբիլի Գրուպ» ՍՊԸ-ին ծանուցվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05 ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ ւկետով սահմանված պահանջները:

«Նոբիլի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում հաստատված պայմանագիրը, ինչպես նաև՝ պայմանագրի ու որակավորման ապահովումները չեն ներկայացվել:

Հաշվի առնելով վերոնշյալը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, «ՆՈԲԻԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/227 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/227 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/227 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և որակավորման ու պայմանագրի ապահովումները և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:
4. Առկա չէ Պատվիրատուի կողմից Ընկերությանը Պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը ծանուցված լինելու փաստը հավաստող ապացույցը:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8629-2022 գրությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 03.05.2022թ. թիվ ԵԿ-004-2022 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և որակավորման ու պայմանագրի

ապահովումները և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 03.05.2022թ. թիվ ԵԿ-004-2022 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի շրջանակներում հրավիրված նիստերի վերաբերյալ կազմված արձանագրությունները, «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցության հայտի փաթեթի և ծրարի պատճենները:

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ առկա չէ Պատվիրատուի կողմից Ընկերությանը Պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը ծանուցված լինելու փաստը հավաստող ապացույցը, ինչը սույն գործի լուծման համար հանդիսանում է էական նշանակություն ունեցող փաստ, մինչդեռ՝ Կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացնի Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**:

Սույն գործի շրջանակներում **համապատասխան հիմք** հանդիսանում է Պատվիրատուի կողմից Ընկերությանը Պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը ծանուցելու փաստը հավաստող ապացույցը, որով հնարավոր կլիներ փաստել, որ Ընկերությանը Պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը ուղարկված լինելու պայմաններում, վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, արդյունքում վիճելի է դառնում Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8629-2022 գրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**